

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի
Հանրապետության կառավարության միջև ոչ առևտրային
վճարումների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և
Բելառուսի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝
Կողմեր, Հայաստանի Հանրապետության և Բելառուսի
Հանրապետության միջև ոչ առևտրային վճարումների ապահովման և
կարգավորման նպատակով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կապահովեն դրամական միջոցների ազատ
փոխանցումը Կողմերից մեկի տարածքում մշտապես կամ
Ժամանակավորապես գտնվող ֆիզիկական անձանց, ինչպես նաև
Կողմերից մեկի տարածքում գրանցված իրավաբանական անձանց՝
ոչ առևտրային գործառույթների հետևյալ տեսակների գծով՝

տրանսպորտի և կապի ծառայությունների վճար,

կազմակերպված և չկազմակերպված զբոսաշրջություն,

Անկախ պետությունների համագործակցության միջպետական
համակարգող կառույցների պահպանման ծախսեր,

Կողմերի պայմանավորվածությամբ՝ դիվանագիտական
ներկայացուցչությունների, հյուպատոսական հաստատությունների,
առևտրական, տրանսպորտային և այլ ներկայացուցչությունների
պահպանման ծախսեր, ինչպես նաև պատվիրակությունների
գործուղման ծախսեր,

միջազգային վեհաժողովների, գիտաժողովների,
կոնֆերանսների, մարզական և մշակութային միջոցառումների,
ինչպես նաև միջազգային այլ հանդիպումների անցկացում,

դատարանների, նոտարական և վարչական այլ մարմինների
ծախսերի փոխհատուցման գծով վճարումներ՝ բացառությամբ
առևտրական գործարքների հետ կապված վեճերի կարգավորման
վերաբերյալ վճիռներից բխող գանձումների,

ցուցահանդեսների և տոնավաճառների անցկացման հետ
կապված վճարումներ, բացառությամբ ազատ փոխարկելի
տարադրամով վճարումների և կապիտալ ներդրումների հետ
կապված ծախսերի, որոնց հաշվարկման կարգը սահմանվում է
Կողմերի համաձայնությամբ,

դերասանների հյուրախաղերի և կինոնկարների վարձույթով տալու հետ կապված ծախսերի վճարում, ինչպես նաև այդ միջոցառումներից ստացված եկամուտների փոխանցում,

փոստային փոխանցումների, պարբերական հրատարակությունների բաժանորդագրման և վճարագրերի, դրամական ակրեդիտիվների ու փոխանցումների վճարումից առաջացած դրամական միջոցների մնացորդների գծով փոխանցումներ,

մուծումներ հասարակական և բարեգործական կազմակերպություններին, ոչ բյուջետային հիմնադրամներին,

համապատասխան փաստաթղթերով հիմնավորված՝ սոցիալական ապահովագրության գծով մուծումներ,

դատական և այլ իրավասու մարմինների դատավճիռների, որոշումների ու սահմանումների հիման վրա վճարվող գումարներ, վարձ՝ իրավական օգնության համար,

կենսաթոշակների, ալիմենտների, պետական նպաստների, լրավճարների և փոխհատուցումների փոխանցում,

ժառանգվող գումարների և ժառանգվող գույքի իրացումից ստացված գումարների փոխանցում,

հեղինակային հոնորարների վճարում և հեղինակային իրավունքների գծով վճարումներ,

միջպետական համաձայնագրերով ուսումնական հաստատություններ, հիմնարկներ կամ ձեռնարկություններ աշխատելու կամ ուսանելու նպատակով ժամանած՝ Կողմերի քաղաքացիներին վճարվող աշխատավարձ, կրթաթոշակ, օրապահիկ և դրամական այլ վճարումներ,

մի Կողմի ուսումնական հաստատություններում մյուս Կողմի քաղաքացիների ուսուցման համար վճարումներ,

մի պետության բուժական հիմնարկում մյուս պետության քաղաքացիների բուժման համար ծախսեր, վճարումներ՝ անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելու համար,

անձանց մահվան հետ կապված վճարումներ /տրանսպորտային և հուղարկավորման ծախսեր/:

Հոդված 2

Կողմերը երկու պետությունների ֆինանսների նախարարություններին լիազորում են փոփոխություններ և ճշգրտումներ մտցնել սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված ոչ առևտրային գործառնությունների ցանկի մեջ:

Հոդված 3

Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև ոչ առևտրային վճարումների վերաբերյալ ընթացիկ գործառնությունները կարող են իրագործվել՝

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Բելառուսի Հանրապետության ազգային բանկի, համապատասխանաբար, իրար մոտ բացված թղթակցային հաշիվների միջոցով,

Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության լիազորված առևտրային բանկերի, համապատասխանաբար, իրար մոտ բացված թղթակցային հաշիվների միջոցով:

Հոդված 4

Կողմերը շահագրգիռ նախարարություններին և գերատեսչություններին կհանձնարարեն կնքել ոչ առևտրային գործառնությունների գծով վճարումների իրականացման և փոխհաշվարկների իրագործման վերաբերյալ երկկողմ համաձայնագրեր:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում թվարկված վճարումների գծով փոխանցումներն ընդունվում են ուղարկող պետության տարածքում գործող վճարման օրինական միջոցներով և վճարվում են ստացող պետության տարածքում գործող վճարման օրինական միջոցներով՝ այն փոխարժեքով, որը փոխանցումը ստացվելու պահին սահմանված է, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Բելառուսի Հանրապետության ազգային բանկի կողմից:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի կատարման և մեկնաբանման հետ կապված բոլոր վիճելի հարցերը լուծվալու են բանակցությունների և խորհրդակցությունների ճանապարհով:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերի կատարման վերաբերյալ գրավոր ծանուցագրի ստացման օրվանից սկսած և կգործի Կողմերից մեկի կողմից դրա

գործողության դադարեցման վերաբերյալ գրավոր ծանուցագիր ստանալուց երեք ամիս անց:

Կատարված է Մինսկ քաղաքում 1995 թվականի մայիսի 26-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բելառուսերեն և ռուսերեն, ընդ որում երեք տեքստերն էլ հավասարազոր են;

Սույն Համաձայնագրի հոդվածներից որևէ մեկի մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում տեղեկատու է հանդիսանում ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1996 թվականի հուլիսի 31-ից: